

ի պատմութեանն նահատակին Գրիգորի զըռշմեալ յիշատակէ [Մեսրոպ?], զի՞նչ ևո ասացից, —զարդար և զարժանաւոր քաւրեպաշտ կաթուղիկոսէն՝ զՄբքոյն ներսիսէ, և զկրօնաւոր առաջքինւոյն և զմեծ լուսաւորչէն Հայոց՝ զտէր Սահակայ և զայրոց բաղզաց, որոց ոչ բացեալ ի բարեքան զքերանս իւրեանց ի վերաց աշխարհիս ոյսորիկ՝ վախճանեցան»: Ագաթանգեղոսի պատմութեան մէջ այդպիսի բան չկայ, որին գիմումն անէր Նազար Փարագեցին: Հեղինակի անսւան աչքի ընկնող բացակայութիւնը թերեւ յառաջ է եկել նրանից, որ այն չէր համապատասխանում աւանդական Ագաթանգեղոսին, և զուցէ, այնահեղ եղել է, ինչպէս զբում է Եղնիկը, «Գրիգորի կարգք»-ը<sup>1)</sup> վերանորոգողի «Մեսրոպ» անունը:

Ենքի տակ չունենք Ա. Գրիգորի ընդարձակ գործունեութեան մասին վիպող զբոյցի առաջին մշակուածը: Երևի գրանից էլ քաղուածներ են բերում երբ մատենագիրները համառօտակի գիմումներ են անում Ա. Գրիգորի գործ գըրքին կամ Ա. Գրիգորի պատմութեան, աւելի ոտոյդ՝ նրա յոյն թարգմանութեան վերայ է յենուում, որովհետեւ նրա տեղեկութիւնը, թէ Ա. Գրիգորը եղել է Նիկիայի ժողովում (de Lagarde, Anal. Syr. Եր. 123, <sup>24—66</sup>, 125, <sup>3</sup>), չեայ մազ յայտնի ուրիշ խմբագրութիւններից ոչ մէկի մէջ էլ:

Հեն յիշատակարանները, ի հարկէ, դիտական, հնախօսական հետաքրքրութիւն են ներկայացնում: ուակայն այն ժամանակ Հայաստանում այդ հետաքրքրութիւնը գեռ չկար: Քրիստոնէական կեանքը, ամեն մի նոր կուլտուրային յատուկ միամտութեամբ Հայաստանում առաջ էր գնում առանց յետ նայելու, և առաջ բերելով նոր խնդիրներ՝ ինչ որ նրանց չէր համապատասխանում, կորուսեան էր դատապարտում: Այդպիսի կորուսեան դատապարտուած գրական գործը կարողանում է վիրկուել միայն, եթէ իւր ժամանակին թարգմանուած է լինում այնպիսի ազգեր գրականութեան մէջ, ուր առաջ չէ բերում կենսական սուր, և մատամք կուսակցական հետաքրքրութիւն, և ուր կապողանում էին շահագրգռուել նրանով, որպէս մի յայտնի եկեղեցու պատմութեան հետ ծանօթացնող ընդհա-

1) Մի ուրիշ ցուցումն էլ կայ, որ այս Մեսրոպը զրել է Ա. Ներսէսի Վարքը (Զարրանալեան Հայ. նին դպրութեան պատմ. Եր. 565.. Սոփ. Հայկ. VI Եր. 457):

նուր քրիստոնէական յիշատակաթանով։ Կրինւում էր սուտած սուտամութիւնը փոխ առած բառերի, որոնք պահապանում են ուրիշ լեզուներում հին ձեզ և այն ժամանակ, երբ իւր քնարակարում վաղուց արգէն ընդունել են նկատելի փոփոխուած կերպ, յաջողելով երբեմն անցնել զարդարման մի քանի առտիճաններ։

Գրիգոր յուսուաւորչի պատմութեան մի այսպիսի, պատահաբար պահպանուած հին ձեռ ստանում ենք առաջին անգամ այժմ հրատարակւող ընագորով։ Ճշմարիտ է, նա նիւթի հնագոյն մշակուածը չէ, բայց այնու ամենայնիւ նու է այնպիսի ժամանակի խմբագրութիւն, որը հնացած և մոռացուած էր ծննդավայրում, իսկ նցա հետ ինքնատիպ խմբագրութիւն էլ մոռացուած և կորած էր մայրենի գրականութեան մէջ։ Այն ահա այժմ մեր առաջին է արաբական թարգմանութեամբ։

Մեր յիշատակարանի սկզբում պակասում է Տրդատի և Գրիգորի մասին կենուագրական ներածութիւնը և նոյն Գրիգորի չարչարանքի մասերը։ Այս պատահական բացը (համապատասխան թերթերը ընկած են) լրանում է հարկաւոր կտորների համառօտ կրկնութեամբ կեսարիայի Վեռնոգիս եպիսկոպոսին ուղղած նամակում և Տրդատ թագաւորը՝ Կոստանտին կայսրի հետ խօսակցութեան մէջ։ Սակայն այնու ամենայնիւ բաց է մնում պատմական ներածութեան խնդիրը, յարուցուել են այնտեղ քաղաքական գէպեր, ի՞նչ չափով են յարուցուած և ո՞րպիսի լուսաբանութեամբ։

Արաբական ընդօրինակութեան ժամանակը կարելի է սորոշել միայն մօտաւորապէս, պալեօգրաֆսկան (հին գրչութիւնների գիտութիւն) հիմունքներով։ Mrs. Gibson-ից ցուցակում ժամանակը ցոյց չէ տրուած, ինձ էլ չյաջողուեց ձեռագրիս թուականը գտնելու բայց գրութիւնից և ընդհանրապէս սովորական տեսքից գտնելով՝ ձեռագրեր ծու գարեց յետոյ չէ։ Քուֆիկց գէպի սովորականը փոխւող գրութեան յատկութեամբ նա աւելի մօտենում է («Kufi, inclining to Nashi») 885 թուի արաբական ընագրի նմուշին, որ հրատարակել է W. Wright-ը The Palaeographical Society. Facsimiles of Manuscripts and Inscriptions (Oriental Series XVI, London 1873—1883, Plate XX.—Arabic)։ Հետաքրքիր է, որ այդ նմուշը առնուած է սըբերի վարքից և կրօնաւորների խրատից, որը նոյնպէս պատկանում է Սինայի սարի վանքին, որի համար գըել է Երևանագէմին մօտ Սաքեինայի վանքի մի կրօնաւոր<sup>1</sup>)։ Մեր ձեռագրի գրութիւնը մինչեւ

1) Տես նոյնպէս Սինայի № 437 մադաղաթեայ ձեռադրի նմուշը (Gibson եր, 89). ղժրաղջարար առանց թուականի,

անդամ աւելի հին է երկում։ Յամենայն գէպս, անկառկած է, որ ներկայ ձեռագիրը արաբական թարգմանութեան ժամանակ կից շատ տարիներով յետոյ է, և ընագիրը մի քանի անդամ է արտագրուել, որով և կարելի է բացատրել ամեն տեսակ աշաւազումների բազմութիւնն ու հրէշաւորութիւնը։

Արտագրողներին ենք պարտական հետեւեալ տեսակի կրնաւումները։

1. Արաբական ներկայ ընագրում պատահաբար բաց է թողուած Յովհ. 14, <sup>18</sup> ցիտաթը, որ կայ հայ ընագրում (Եր. 79, 40)։ Ոյլ և «ուխտիւքս այսոքիւք» բառերով (ռուս. հրատ. 71, 26—27, ոյն թարգ. Եր. 7, 15), անկառկած այս խօսքերն են կնկատ առնուած։

2. Մամիկոնեանների տիտղոս «սպարապետ»-ը առանձին անձն է գարձած (123, 19, ոյն թարգ. Եր. 57, 18)։ Հազիւ թէ կարելի լինի թարգմանչին վերագրել այս անհեթեթութիւնը, քանի որ 115, 9—10 երեսում (ոյն թարգ. Եր. 49, 11—12), նա շատ լաւ մեկնում է այս բառը։

3. Աւոնդիոսը տալիս է միայն Յովհաննէս Մկրտչի նշանաբը (129, 25, ոյն թարգ. Եր. 63, 26), որպէս թէ Աթանագինէի նշանաբը չէ եղել հայ ընագրում (Եր. 470) յիշուած, բայց յետոյ (131, 41—42, ոյն թարգ. 66, 18—19) յիշում է և Աթանագինէի նշանաբը։ անկառկած է, որ արտագրողն է բաց թողել։ Թէև Սեբաստիայի Նահատակ Աթանագինէի նշանաբը Ա. Գրիգորը դուցէ ստացել է Սեբաստիայում և ոչ Կեսարիայում<sup>1)</sup>։

Սոյն արաբական ընագիրը Թ. դարի առաջին կէսից հին չէ։ Այնտեղ յիշուած են բուսներ (Եր. 133, 24—25, ոյն թարգ. Եր. 67, 27)։ Խոկրուսներ կամ բուսներ հարաւում առաջին անդամ յիշւում են Թ. դարից սկսած։ Նրանց յիշում է Պրուդենցիոսը 839 թուին և համարեա նոյն ժամանակին էլ՝ Մուսլիմ թ. Արու Մուսլիմը (Marquart, Osteur. und ostas. Streifzüge, Եր. 354), եթէ միայն Մարքարտաց ուղղի է իւր ենթագրութիւնները մէջ, թէ իւն-Խօսդագիրէն ըուսների մասին իւր տեղեկութիւնը առել է Մուսլիմից։ Հազիւ թէ կարիք լինի կասկածել, որ Գրիգորի պատմութեան օրինակի մէջ ըուսների երեալը աւելագրութիւն է, բնագրինը չէ։ Այդ վերսիան, բացի հայերից, Երեք ժողովուրդ է ճանաչում, որ

1) Նայել նաեւ Ս. Հոփփոֆմէի՛ Տրդատի հետ մարառելու ժամանակի վերաբերութեամբ անհետեւողականութիւնը Երբեմն «յերրորդ ժամէ ցտամներորդ» (83, 46—47 նոյն թարգ. Եր. 18, 22—23), երբեմն «ի տամներորդ ժամէ աւուրն ցերրորդն առաջնոյ զիշերոյ» (85, 22—28 նոյն թարգ. Եր. 21, 5—4)։

Ս. Գրիգորից մկրտութեւն են ստացել, և դրանք են վրացիք, արխաղներ և աշաններ (Եր. 135, 9, 15, 137, 9—18, սոյն թարգ. Եր. 68, 29—50, Եր. 69, 2—5): Այս երբեակ դաշնակցութեւնը կըկնում է դեռ մի քանի անգամ, բայց արխաղների տեղ երբեմն երեւում են լազեր (Եր. 117, 56—57, սոյն թարգ. Եր. 52, 17), երբեմն ըստոներ (Եր. 133, 24—25, սոյն թարգ. Եր. 67, 27), երբեմն համարեա անյայտ «Դ-ր-զ-կ-ի-թ» (137, 9, սոյն թարգ. 70, 27) ժողովաւրդ: Ակզեռում ես կարծում էի թէ այդ անունը նոյն Դերջան կամ մինչեւ անգամ Շաղիկն է (Отчетъ о работахъ на Сирии и азън. 23). ստկայն առաջին ձեր հայ դաւառի անունն է, որ չե պատշաճում ընագրի ցոյց տուածին, ուր խօսքը հայերից ապրեր ժողովրդի մասին է, իսկ երկրորդ ձեր՝ ժողովրդի անուն, որ նկարագրուղ պատմական դէպրերի ընմից շատ հեռի է. այլ եւ, ի գէպ, դատելով ըստ ընագրին՝ ըընայելով անունների տարբերութեան, ցոյց առւած երբեակ դաշնակցութիւնը պէտք է բազկացած լինի, յամենայն դէպս, միենայն ժողովութզներից նւ իսկապէս, արխաղների տեղ լազերի երեան գալը ըստ էութեան գործը չե փոխում, արխագ անուամբ այստեղ ևնթագրուում են, հաւանօրէն, լազերը, որպիսի կոչում նկատելի է Զաքարիա Հակառի մօտ էլ, ինչպէս նկատել է Գելցերը (Die sog. Kirchengeschichte de Zacharias Rhetor ... von K. Ahrens and G. Krüger, Եր. 382) և նրանից յետոյ՝ Մաքրվարտը (Osteur. und Ostas. Straifzüge, Եր. 174): «Դ-ր-զ-կ-ի-թ»-ի մէջ «դ» սկզբնատառը արտապիկանում նախընթաց ըառի վերջին տառի սիմալ կրկնութիւնն է. մնացած «ր-զ-կ-ի-թ»-ի ընթերցմամբ, կարծում եմ, մինք ունենք յունարէն լազիթի ձեր, արաբական լ-ն ը ի սիմալ փոխակամբը և, երկիր, կողման նշանակող վրացերէն էն վերջաւորութեան յաւելմամբ: Բնադրում ողից թարդ մանուած է արաբերէնը, արխաղների անուան մէջ այսպիսի տատանումն հազե թէ լինէր, «արխաղներ» լազերի կամ լազերի արաբական յետնագոյն աղաւազումն է, նոյնպէս արխաղների փոխանակ բուներ, պէտք է համասել արաբ թարդ մանչի կամ աւելի ճիշդ՝ յետնագոյն արաբագրողներից մէկի սարքած, որ այդ անունները նոյնացնելիս՝ զեկավարուել է իւր յատակ դիտումներով:

Ոճի սարսափելի աղաւազումն արդէն ոչ թէ արտագրութեանն, այլ թարդ մանուածեանն է: Ստկայն մեր յեշատակարանի աղաւազուած լեզուն չի կարող նրա յետնագոյն ծագ ման ապացոյցը համարսւել: Արաբական գրական լեզուի յոտակութիւնը, որպէս յայտնութեան դրբե—Կօրանի—սրբազան լեզուի, պահպանում էր աւանդաբար միայն մահմեդական շրջաննե-

րում։ Քըիստոնեայ գրողները չեն ունենայ ի հարկէ դէպի կօրանը այն բարեվաշտութիւնը, ինչ որ անկասկած պէտք է ունենային և ունէին մուսուլման գրողները։ Հետեաբար արար կեսդանի, խոսակցական լեզուի հեղեղը յետ մղելու արդելը չըկար։ Քըիստոնեայ գրողները առանց որ և է աւանդական զգուշաւորութեան կարող էին գրել արարերէն, և նրանց գրուածքի մէջ հոծ աղաւաղումները չեն կարող ապացոյց համարուել թէ այդ գրուածքները յետնագոյն ժամանակի գործ են։ Նրանք միշտ էլ աւելի ժողովրդական լեզուով են զրել քան մահմեդականները։ Նոյնպիսի երեսոյթ, նոյնպիսի պատճառով արար գրականութեան մէջ նկատելի է արարերէն գրող հրէաների վաստակներում։ (I. Friedländer, Der Sprachgebrauch des Maimonides, 1902, I. եր. XIII—XIV).

Կարծես մի քանի թերի թողածներն ու դետաւորեալ կլրասումները բուն արաբական վերսիայինն են, օրինակ—

1. Արաբական վերսիայում (եր. 81, <sup>27</sup> ոոյն թարգ. եր. 17, <sup>4</sup>) Հռիփուիմէ անուան նշանակութիւնը, որ ծագել է ուկալո (ρίπτω) յոյն բառից (հայ եր. 108, 25) չէ բացաբռուած, մինչդեռ այդպիսի յունական ստուգաբանութիւնը յունարէնից թարգմանուած արարերէնում, ոչ միայն հայերէն աղդային խմբագրութիւնից աւելի տեղին կը լինէր, այլնաև շատ հասկանալի։ Սակայն սաստգաբանական բառախաղի այս զանցառութիւնը նրանով է բացաբռուում, որ արար ընագիրը ընթերցողներին ողոնք յունարէն չգիտէին, հասկանալի չէր լինի։

2. Զրոյցը, թէ ինչպէս մի այրի կին արքունիքից կերակրում էր Ս. Գրիգորին, արաբական վերսիայում համառօտակի յիշուած է նրան վեճապից դուքս հանելու առիթով, (եր. 93, 29, ոոյն թարգ. եր. 28, 21)։ Բայց մի բառով անդամ չէ յիշուած այն տեղ (եր. 71, <sup>36</sup>—<sup>37</sup> ոոյն թարգ. եր. 7, <sup>26</sup>—<sup>27</sup>), ուր հայ ընագիրը տալիս է այդ դէպքի մանրամասն նկարագրութիւնը (եր. 82, <sup>5</sup>)։ Սակայն հետաքրքիր է նկատել, որ արարաց Գէորգեալիսկոպոսը այս զրոյցը իւր տեղում զանցառութեան տալով հանդերձ, այնուամենայնիւ յապաւումով յիշում է (de Lagardé, յեշ. յօդ. եր. 124, <sup>8</sup>—124, <sup>10</sup>.։ Գաշեան, յիշ. յօդ. եր, 15)։

Այնուամենայնիւ կարծում եմ, որ արաբական վերսիան զեօծ չէ մի քանի կրծտառումներից։ Մէկը—թարգմանիչն է թէ արտադրողը—գործը հեշտացնելու համար թոյլ է առւել իրան, մի քանի ոչ-էական կտորների կրծտառումներ քարոզութիւնների մասումն էլ։ Քարոզութեան ընդարձակ մասը, որ կայ հայ աղդային խմբագրութեան մէջ, չէ եղել յոյն ընագրումն էլ, որից թարգմանել է արարը, բայց մի քանի հատուածներ այս

քարոզութիւնից պահպանուել են արաբական վերսիայում՝  
օրինակ, Ա. Գրիգորի քարոզութեան խօսքերը (Եր. 107, 20 սոյն-  
թարգ. Եր. 41, 52) յիշեցնում են քարոզութեան միջի հայ ըն-  
դարձակ յաւելու ածը (377—379), և շատ հաւանական է, որ  
առանձին տեղերի նոյնպիսի ուրիշ կրկնութիւններ էլ են եղել,  
եթէ տեղ տեղ գիտմամբ չեն կտրուել, միմիայն համառօտու-  
թեան համար: Այդպիսի կրճատումն ունենք, հաւանօրէն, 99—<sup>13</sup>  
երեսում (սոյն թարգ. Եր. 33, 50): Յայտնելով, որ Ա. Գրիգորը  
այնուհետև սկսեց քարոզել Ա. Գրիքը, վկայաբանութիւնը գրողը  
սկսում է պատմել Հին Կոտակարանի պատմութիւնը, բայց  
պատմութիւնը հէնց սկզբում ընդհատուում է: Այն տեղ, ուր  
Ա. Գրիգորը պէտք է սկսէր պատուիրանազանցութեան գէպըը  
պատմել, ներկայ արաբական վերսիան դնում է Ա. Գրիգորի  
ըերանը այս նախադասութիւնը. «թողցուք այժմ յիշել զշար-  
ծանօթութիւն (պատուիրանազանցութիւն)», և շարունակ-  
ում է Ա. Գրիգորի գործերի պատմութիւնը:

Չնայելով մեզ մատչելի արաբական օրինակի մատնանշան  
պատահական կամ յատուկ կրճատումներին, հենց այն ձեռվ  
ինչ որ մենք տեսնում ենք, այն հետաքրքիր է ամենից առաջ  
այն ժամանակամիջոցի և միջավայրի վերաբերութեամբ, որին  
կարելի կը լինի վերագրել. դրա համար էլ կարեոր է մեզ պար-  
զել արաբական վերսիայի ծագումն:

Ա. Գրիգորի որի չարչարանքի վերև յիշուած արաբա-  
կան ընադիթը թարգմանուած է անմիջապէս յունարէնից: Այդ  
անկատած է:

Կարող է միայն կասկած լինել—արաբ, թէ արաբացանց  
սիրեացի է թարգմանել, որ մեր համար միւնոյնն է: Միակ ձեռ-  
ուագիրը, որի մէջ դանւում է մեր ընտակիրը, ունի երկու  
թուարկութիւն—կոպտական՝ երեսների վերայ և վրացական՝  
տետրակների: Արաբների քրիստոնէական ձեռագրերի մէջ կոպ-  
տական երեսահամարը ոովորական երեսյթ է: Երեսահամար-  
ների նոյնպիսի թուանշաններն էլ կոչում են կոպտա-արաբա-  
կան: Բայց ուրիշ էլ ոչինչ ըրկայ, որ կոպտական ագդեցութիւն  
ցոյց տար: Յատուկ անունները յունական այս կամ այն վեր-  
ջաւորութեամբ մէջ ըերելը, նայելով թէ բառը յունարէն  
ընադրում ինչ հոլովով էր, շպէտք է շփոթել այն բանի հետ,  
թէ յունական մի քանի բառեր կոպտերէնում իւրացուած են  
յունական զարտուղի հոլովով (Stern, Koptische Grammatik, 1880  
№ 160, O. von Lemm, Eine dem Dionysios Areopagita zugeschriebene  
Schrift in koptischer Sprache, Sep.—Abdr, aus dem «Bull. de l'Acad.  
Imp. des Sciences de St. Pétersbourg» 1900 մարտ, Եր. 287), և յամե-

նայն գեղս, միայն այս մի հանդամանքի վերաց չի կարելի ոչինչ վճռական ըան ասել: Վրացերէն թուարկութիւնն էլ վկայում է թէ վրացիները, որ ինչպէս յայտնի է, բաւական ազգեցութիւն ունէին Սինայում, մեր այս ձեռ ազրի երեալու ժամանակ, մասնակցութիւն են ունեցել քսիստնէտկան արաբական գրական դրծում: Արաբական լեզուի ազաւաղ անկանոնութիւններն ու գրական ձևերց ուշբե ընկնող շեղումները հիմնաւորապէս ապացուցանում են որ թարգմանիչը արաբ չէր: Սակայն արաբ գրասական լեզուից այս շեղումները գեռ անհրաժեշտ ապացոյց չեն, թէ հեղինակը այլացեղ ծաղումից է: Nöldke այս իսկ հարցի առիթով Մայրոնիկի արաբերէնի մասին քացականում է, «Պէտք է ուշբ գալ ձեռնել, թէ ինչպէս է գրում մի իսկական ուժական արաբ, որպիսին է Մուրագգասին»: — «man beachte, wie ein so reiner arabischer Semit wie Mugaddasi schreibt!» (առ I. Friedländer-ի, յիշ յօդ. Եր. IX. ծանօթ. 4): Friedländerը այսպիսի արաբերէնի մասին մէջ է ըերում Յեխուգալ-Իբն-Տիբրոն-ի ընօրոշող կարծիքը որ յայտնել է Աբու-լ Վալիդի «Sefer—Harikma» (Հրտա- Kirchheim, Ֆրանֆուրտ Մայնի վերայ 1856թ. Եր. III) նրա թարգմանութեան ներածութեան մէջ, ըստ այսում, «պատահում է որ մենք թարգմանական աշխատանքի մէջ խորասուզուածներս արական վերջաւորութիւնը իդականի տեղ ենք դնում, կամ եւ զակին՝ յոդհակու տեղ, և ընդհակառակին, արաբականի մէջ եղած ները այդ տեսակ սխալներից են» (յիշ յօդ. Եր. XIII. ծանօթ.):

Արաբական քրիստոնէտկան գրականութիւնը քիչ է ուսումնասիրուած: Քրիստոնէտկան յիշատակարանների արաբ լեզուի վերայ աւելի սակաւ է ուշագրութիւն դարձուած: Քիչ է ուշագրութիւն դարձուած նրա ազաւաղումների, ուամկարանութեան և բազմազանութեան վերայ: մինչդեռ յայտնի է, որ արաբերէնը որպէս զրական լեզու դորժ էին ածում զանտղան երկրների, զանազան ծագման, զանազան դաւանութեան քրիստոնէաններ—միաբնակներ, օրթոդոքսներ (քաղկեդոնականներ), արաբներ, սիրիացիներ, կոստներ և այլն: Սակաւաթիւ հրատարակուած յիշատակարանների մէջ այնուամենայնիւ գտնում ենք մի կարգ ազաւաղ ձևեր և ինքնուրոյն արտայայտութիւններ, որոնք նկատելի են և մեր բնադրում, ինչպէս օրինակ, Studia Sinaitica № VII, M. D. Gibson և Horae Semiticæ-ի № III-ում A. Sm. Lewis հրատարակած բնագրերի մէջ: Մեր յիշատակարանում թերեւ գործ ունենք արաբ կենդանի լեզուի յատկութիւնների հետ, որը կիրառութեան մէջ էր քրիստոնէանների և մասնաւորապէս քրիստոնէայ մելքիունների (քաղկեդոնականների) մօտ: Մի կարգ աշխարհագրական անուններ

վրացական ձեւ ունենաւ Բայց անհրաժեշտ կարեք չըկայ այդ  
բացատրել նրանով թէ թարգմանիչը վրացի էր: Նկատուած  
վրացական տարրը, անկասկած, մի քանի գէպքերում յունա-  
կան ընագրինն են. այսպիսի գէպքերում այս երեսյթը ուրիշ  
կերպ էլ բացատրելի է: Կարելի է մի հանդամանք յօգուտ վրացի  
հեղինակութեան ցոյց տալ. այն է յունական շ-լ (շ) կ փոխ-  
ուած. թէև այնուամենայնիւ, այդ ինքն ըստ ինքեան ոչինչ չի  
մնուում. գա պարզ յոյն բարբառացին, բաւական ոովորական  
երեսյթ է, որը յոյն բարբառի ազգեցութեան հետ նկատում  
ենք՝ յունական գարձուածները վրացերէնի փոխանցելիու, որ  
պատահում է Սինայեան վրացերէն Փ. դարի ձեռագրի մէջ էլ:  
Բայց, սակայն շ-կ այդպիսի ընթերցմունքը պատահական զու-  
դադիպութիւն չէ լազիքի հարեւոն փոքր ասիսկան յոյների ար-  
տասանութեան մէջ: շ-ով յոյն բառերը լազերի լեզուի մէջ  
մտել են յատուկ այդպիսի առողանութեամբ. օրինակ ունի  
ժելիա—(շնչոչ) հազար: Այդպէս էլ կարող էին լինել շ-կ հսչիւնը  
և լերացիների, ոչ արևելեան, այլ արևմտեան իվերացիների, ինչպէս  
յետոց կը բացտարուի՝ լազերի հարեւոն մնութեցիների ոչ զրական,  
այլ կենդանի լեզուի մէջ: Այս հանդամանքում, արաբական թարգ-  
մանութիւնը, հազիւ թէ կարող լինէր երեւան գալ Բ.—Թ. դարից  
ուշ: Վասն զի այդ ժամանակից ոկտած տրեմտեան վրացիների  
սովորութիւններն ու կարգերը (տրագիցիա) սկսում են վերջնա-  
կանապէս տեղի տալ արևելեան վրացիների աւանդութիւննե-  
րին, որոնք, ինչպէս երեւում է, իսկապէս օտար էին Ս. Գրիգորի  
պաշտամունքին և քիչ էին հետաքրքրուում նրա մասին զրոյցնե-  
րով: Առկայն արաբական վերոփայի նոյն իսկ յունական ընագիրը  
շատ հին ժամանակի արտադրութիւն չէ: Կթէ հիմք ունենայինք  
մտածելու, թէ ալսն առելով հեղինակը ի նկատի ունի հարեւոն  
արխազներին, այն ժամանակ յունական ընագիրը պէտք է  
հասցնել ամենաշատը Ֆ-գարին: Իւ կուլակովսկին (Ю. Կула-  
ковскій) բացատրում է, որ «ալանների լուսաւորուել է նեկողայոս Միստիք-ի պատ-  
րիարքութեան օրով», և այն էլ, հաւանօքէն, այն ժամանակ,  
երբ նա երկրորդ անգամ ըռնեց պատրիարքական աթոռը»  
այսինքն, 912—925 թ. (Христианство у Аланъ, Виз. Времен.,  
1898, V, եր. 3. նոյնպէս 4—7, 7—9): Բայց ինչպէս յայտնի է  
ալանները, օրինակ, երբեմն Պրօկոպիոսի մօտ<sup>1)</sup> Ալբանցիների կամ

1) Պրօկոպիոսի (Պօտ. IV, 3. 469, Բօն.) այսպիսի ալանները,  
որ բարեխամ էին պարոփիներին, սփառած էին մինչև «Կապից դաները»  
(մատ. Г. Деступисъ, Прокопія Кес. Ист. войнъ, П, եր, 225):

Ալուանների ըստ Նոր-Հայելէն Ազուանի յետնագոյն անունն է, իսկ այս ալանները ծ-ից էլ դեռ մի քանի դար առաջ քրիստոնեայ էին: Այս Ալանիայում փոխ Ալբանիայում ծ- դարում ու թէ քրիստոնէութեան սկզբնաւորութիւնն է, այլ քաղկեդոնական շփաթութիւնների լուծումն, մի մասը վերջնականապէս միանում է քաղկեդոնական Վրաստանին մի մասն էլ հակառակեցոնական Հոյաստանին<sup>1)</sup>:

Արտաքական վերսիայում արխագների յիշուելը կարող էր հաստատել որպէս terminus a quo Զ. գարս, երբ Յուստինիանոս Ա. -ի ժամանակ (527—565) Նրանք քրիստոնէութիւնն ընդունեցին (Պրոկոպի, De bello gothicico, IV, 3. Տրատ. Եօթ. եր. 472—473<sup>2)</sup>): Մեր յիշատակաբանը իսկապէս Զ. գարսից յետոյ է, բայց զրահամար հարկ չկայ յենուել այն բանի վերայ, թէ այնտեղ յիշում են արխագները. մանաւանդ որ արխագ տերմինը ներմուծուած է, հաւանօրէն, արաք թարգմանչից կամ աւելի շուտ, արտագրողներից մէկի ձեռքով: «Արխագներ» տերմինով, ինչպէս տեսանք, ցոյց է տրւում այն ժողովուրդը, որը ուրիշ գէպօռում «լազերի» անունով է երևում: Հետք չկայ կարծելու, որ այս ժողովուրդը յոյն ընտագմում կրկնակ անուն ունենար: Մինչդեռ «Լազեր» տերմինը անկառակած կար յոյն ընտագմում, որովհետեւ նա արաք թարգմանութեան մէջ պահպանել է յոդնակի թուի սեռական հոլովի յոյն վերջաւորութիւնը<sup>3)</sup>: «Լազերի էթ» ըն-

1) Հետարրիք է, որ Յ. Կուլակովսկի<sup>4)</sup> ալանների պատմութեան ուսումնասիրութիւնը առանց հայերի ց գլուխ գալիս: ա. Ասկ եայ Հօրդայի խանից հովանաւորուած արանների Սիմէօն միտրոպօլիար, որ տեղական եկեղեցու երկպատկութիւնների պատճանն էր (1554 թ.) ի միջ այլոց՝ «արգելը դրից Թանի . . . քահանաների վերայ. որ օրինակատարութիւններ չանեն» . . . «Մի բանի օրթոգրուների (քաղկեդոնական) զաւակներ մկրտուեցին հայ գաւանութեամբ (յիշ. յօդ. եր. 14). թ. 4564 թուին պահնների եպիսկոպոսաթան աթոռը բանողն էր Մելիտինէի (Հայաստանում) միտրոպօլիտ տեղակալը» (յիշ. յօդ. եր. 45):

2) Կուլակովսկու (Կուլակովսկի) առածով՝ 547—548-ին անմիջապէս նախընթաց տարիններում (Ուր Յուստիանոս կայսրը Ալազգների<sup>5)</sup> համար առանց շինեց: Արքոլոգ. Աշենք և Համբեան, տ. V. Մոսկվա 1897. եր. 54):

5) Լազերի բարձր պաշտօնական չքաններում քրիստոնէութիւնը աւելի շուտ է մատր գտել քան Արխագիայում: Հետարրիք է Ս. Գրիղորի մասին գրոցի համար համեմատութիւնը լազերի թագաւոր Զամնասկի (Քամնասի) օրդի Յաթիայի կամ Յաթայի դարձի: Այս Կոստանդնուպոլիսում ընդունեց քրիստոնէութիւնը, ամուսնացաւ Յիւզանդական մի քարձաս-

թերցման մէջ, ինչպէս ցոյց է տրուած, մենք ունենք այդ իսկ լազերի երկրի յունարէն անուան վրացական ձեւը՝ բայց աշխարհագրական անունների հետ այդպիսի վերաբերմունք օտար չէ յոյն ընագրին էլ: Վերջապէս յիշատակարանում խօսքը յատկապէս լազերի և Լազիքի մասին է այլ ոչ իսկական Աքխաղների մասին: Լազիքը մի որոշ ժամանակ ընդգրկում էր ոչ միայն այժմեան Լազիստանը այլև Սե ծովի արևելքան ափը այժմեան Գուրիայի, Մնդրելիայի և անդամ Խմերեթիայի հետ միասին: Յունական լազօի կամ լազօի, հելլենացած ձեռվ պահպանուել է տեղական լազ(ն)ի laz(n)i տերմինը, որը իւր հերթին կարելի է մեկնել որպէս երկրի անուան գաւառական ձեւ զան (զան) արմատից լա (լա) յօդով: Սուաներէնում այժմ էլ Մնդրելիան սովորաբ զան (զան) է կոչւում: (իսկապէս զան սկզբում նշանակում էր անձն, ժողովուրդ, բայց ոչ երկիր, ըստ ոյսմ, յոգնակի զանար մնդրելցիներ), մու-զն-ի (mu-zn-i) մնդրելցի լու-զն-ի (lu-zn-i) մնդրելական: Սրանով սակայն հիմք չըկայ, ի հարկէ ոչ ստուգաբանօրէն և ոչ էլ դորձնապէս նոյնացնել «լազ» և «մնդրելցի» (փոխուած) «մնդրէլ» տերմինները Այստեղ պարզապէս դորձ ունենք ցեղակից ժողովրդի քաղաքականապէս վերածնութեան հետևանքի հետ, մի ժողովրդի անունը դէպի միւս ժողովաւոզը փոխանցելով: Վրաստանում էլ մօտ Հ. գարում «արխագներ» տերմինը արևմտեան, յատկապէս Խմերեթիայի և Մնդրելիայի, Վրաստանի նշանակութիւն էր ստացել: Մինչդեռ լեզուարանօրէն «մնդրել» (մնդրելցի) նշանակում է, ինչպէս այժմ կը տեսնենք, «Եվեր»:

Օտարները, ամենից առաջ հին ազդերը՝ Կովկասով աշխարհագրական տեղական անունները կամ փոփոխել են կոմ թարգմանել: Վրաց լեզուի առողանութիւնը, որ զարդացել է ցեղակից սեմական լեզուների հետ առնչութ որ, հնարաւ որ է դարձնում

տիման մարդու աղջկայ հետ. իւ ստանալով (518—521) Յուստինիանոսից եկեղեցական իշխանութեան նշանները, վերադարձաւ կոոչ հայրենիք՝ Թագաւորելու (Дестуница, Прокоп. և պր. եր. 454. ծան.), Ընդհանրապէս քրիստոնէութիւնը լազիք մտաւ աւելի վայ: Զ. դարի սկզբում պուցէ եւ Ե.-ում լազերը երուսաղէմում վանք ունեին: Ա. ու կարելի է եղրակացնել այն փաստից, որ Յուստինիանոսը երուսաղէմի անապատում նորուց լազերի տաճարը, որ այդ ժամանակ հաւանական է, հնացել էր, (Прокопий, De aedificiis, V, 9):

1) Համ. Սուաներէն մուրրվամ (μυρκναμ) աշտարակ, լամուրրվամ (λαμυρκναμ) աշտարակի տեղ: Այժմիան սփաներէնում աշխարհազրական տերմինների մէջ լա (la)-ի փոխանակ լէ (լո) հնը զտնուեմ.

«հմերիա» աշխարհագրական տերմինի կովկասեան նախատիպը դուքս քերել, տերմինի, որ յաջողել է իւր բնագաւառում ոչ միայն փոփոխութել, այլ և զանազան ձեւեր ընդունել ժամանակի կամ տարածման՝ այսինքն, տեղական բարբառների զարգացման համեմատ։ Այստեղ այժմ հարկ է յիշեալ տերմինի բացադրութիւնը տալ, որովհետեւ նա իւր հերթին հնարաւորութիւն է տալիս, Ս. Գրիգորի գործերի արաբական վերսիայի մի տեղեկութեան էական-պատմական հիմքը նշմարել։ Ցոյն իվերիա և իվերէս փոխ եվերօի տերմինների բացատրութեան փորձերի պատմութեան չեմ կպչում։ Միայն փաստն եմ պարզում, որ յոյները վրացիներին և Վրաստանը այգակս են կոչում, և զարմոնս վրացիների, և յոյների հետեւղութեամբ նոյն կոչումը տալիս են հայերն էլ, սղելով բառասկզբի անշեշտ ի ձոյնաւորը = Վիրք<sup>1</sup>)։ Յատկապէս որ հայերն էլ գործ են ածում այդ տերմինը, կարող է առանձին իմն զարմանք առաջ բերել, որովհետեւ հայերը, թւում է, թէ պէտք է իմանային, որ վրացիք իրանց աշխարհը «Քարթլ-էին Քարթլ-ի Խոսքից» Սաքարթլիւ յետնագոյն ազգային — կուլտուրական, և աւելի շուտ, քաղաքական տերմինն է), իսկ իրանց կոչում էին «Քարթուէլ-իաներ» Բայց վրացիներն էլ ի փոխարէն՝ ի զարմանս հայերի՝ որանց կոչում են «Սոմելս-իաներ», իսկ աշխարհը՝ Սոմելսթ-ի (Սոմելսիա)։ Հայերի զարմանքից, այս գէպքում, չե կարելի մատն չհանել իրանց պատմական տեղագրութիւնը գիտեցող վրացիներին էլ, որովհետեւ անկառած է, որ վրացիները հայերի հետ առաջին անգամ ծանօթացան վրացական Սոմելսթ գաւառում բնակած իրանց ցեղակիցների միջոցով և այդ գաւառի բնիկ վրացի ժողովրդի անունը փոխանցեցին հայերի վերայ։ Այս միակ գէպքը չէ վրացիների հետ։ Վրացիները իրանց կենդանի լեզուի և մինչեւ անգամ իրանց հին գրականութեան մէջ էլ, (անկախ գրոց տերմինից) յոյներին կոչում են ոչ թէ հայերի պէս յոնիացիք, հելլեններ և կամ գրեկներ, այլ «բերձէններ» (բերձէն-ի)։

Այս զարմանալի կոչումն, անկառած, տեղական վրացական է։ և, և կատարեալ զարմանո, յատկապէս վրացի ցեղի կոչումն, որի միջոցով արևելքան վրացիները ծանօ-

1) Կորենացու աշխարհազրութեան մէջ իվերիա փոխուած է Գեորիա = Veria.

թացել են յոյների հետ։ Միայն արեւելեան վրացիները կարող էին առաջին անգամ տալ այդ անունին այդպիսի օտարութիւն նշանակութիւն։ Զ-ի և ի-ի մէջ զրուած է աեղ, երկիր ցոյց տուող էն յոդը յոդնականացուցիչ վերջաւորութեամբ (լրիւ՝ Էն-ը, կրծառ՝ 6-ո)։ Ըստ նշանակութեան՝ համանիշ վրացական ը (լս) շ, և այլն վերջաւորութեան։ Բեր-ձ-իսկական արմատից, առանց (էն) յոդնականացուցիչ վերջաւորութեան կազմուել է բեր-ձ-ուլի՛—ածական հին ձեր, որ նշանակում է յունական։ Արդեօք ձ-ի և վրացերէն որդի նշանակող ձ-ի մէջ առընչութիւն կայ, այս րօպէիս չեմ կարող հաստատել։ Խրոզութիւնն այն է, որ մեր աշխարհագրական տերմինի հիմքն է բեր (Եօր), իսկ արմատը բր (Եր)։ Միւս հնչիւնական ձեր այս բր (Եր) երկտառ արմատի է մը (Մր)։ Խմեր-էթ-ի աշխարհագրական տերմինի մէջ մենք ունենք աշխարհ նշանակող իր սովորական վերջաւորութեան վրացերէն ձեր, իսկ Խմեր-էլ-ի ազգագրական տերմինի մէջ—ցեղ նշանակող իլ սովորական վերջաւորութեան վրացերէն ձեր, սրա մը արմատի իմեր կազմից։ Սրմատը ինքն ըստ ինքեան նշանակում էր սկզբում ֆուզովուրդ։ Այս իմեր արմատը ն (ն) յոդնականացուցիչ վերջաւորութեամբ գործ է ածուում իմեր-ն-ի ժողովրդի ոնոււնն նշանակութեամբ։ Օրանից պարզ է, որ իմեր բառը ամեննեին չի նշանակում «այն կողմ» (յոյն կոյս), իմեր բառը չի կարելի նոյնացնել վրացերէն նոյն նշանակութիւնը ունեցող բառի հետ, որը ի գեղ, հնչում է իմիեր և ոչ իմեր (համ. Սևլար, Դրեանիայի սկզբան օ Կավказն, եր. 303)։ Բացի սրանից, չի կարելի Խմերեթիայի կոչումը բացարել կարտալինցիների տեսակէտով, որոնց համար Սուրբամի քարձրաւանդակի ետեի տմբողջ արեւմտեան կողմը կոչում է «Այն կողմը»։ Այս արևմտեան կողմի վրացական այլ ցեղերը, ինչպէս մնացրելցիները, գուրիացիները, իրանց երկերը ամեննեին իմերելներ (իմերեթեցի) չեն կոչում։ Այդ սահմանափակ շրջանի տեղական էտնօգրատական ունունն է։ Ի հարկէ իմերները հնումն աւելի ընդարձակ տարածութիւն էին գրաւում։ Նրանց անունը, որպէս փշունք, պահպանուել է Բաթումի նահանգի մի գաւառամասնում (Խմերխեւ, որ նշանակում է, Խմերեան կիրճ), նոյն իսկ պատմական աշխարհագրութիւնից գիտենք, որ Խմերեթիա և Վնդրելիս տերմինները նոյնացած էին, այդ բանի համար կայ ինչպէս կը տեսնենք, լեզուաբանական հիմք։ Պակայն իմերը է ընդհաւուր տեղային տերմինի կրծատուած հին ձեւերից մէկը, որը պահպանել է որպէս մնացորդ մի որոշ, սահմանափակ առանձնացած շրջան։ Իմեր տերմինի անթերի և հին ձեր կըլինի Յիմեր, իսխ. Ցիրեր։

Վացերէն արմատները մեծ մասամբ եռատու են, բազ-  
կացած երեր բաղաձայներից: Եթու այս չափից պակաս է, այդ  
այն պատճառով է, որ նոր ժամանակներումու անհետացել կամ  
սղուել են կիսաձայն կամ ժոյլ կոկորդացին տառերը, օրինակ  
յու, եթէ նրանք չեն պահպանուել երանց համապատասխան  
շաղ (յ-ին համապատասխան է գալիս ս), կամ չեն թանձբացել  
համապատասխան կոշտ (յ-ի համար՝ իս, դ.) բաղաձայնի փոխուելով  
(համ, աբասիսի, փոխարքազի աբազգի): Փոխանակ յիմեր-ի իմեր  
բառի մէջ կրկնուում է նոյնպիսի երկտառի գէպը, նոյնպէս և  
յըեր-ի տեղ՝ բեր Վերջին ձեր կանոնաւորապէո յ-ն ա-ի փոխուե-  
լով՝ (սըեր), հանգէս է եկել Սպեր աշխարհագրական տեր մինը.  
Սպերը և' հայ և' վրացի Բագրատունիների ցեղական կալուածքի և  
քաղաքի անունն է, որ գտնուում է ձօրոխի վերին հստանքի  
մօտ: Հայկ չկայ բացատրել, որ Սպեր կամ Սպիր, փոխ. Խոպեր  
(Յիոպեր) կամ Խոպիր (Յի-Սպիր) գաւառը հնում աւելի ընդարձակ  
տարածութիւն էր գրաւում: Եւ նոյն տերմինն էլ տեսնուում ենք  
յունական Սիւ-սպիր իտ-իս-ի մէջ, ուր սիւ է հոմանիշը վրացերէն  
սի նախդըրի փոխ (յ) ի՝ աեղ ցոյց տուող անունների մէջ, իսկ  
իս-ը երկեր, կողմն նշանակող իր, եր վերջաւորութիւնների զու-  
կորդն է: Սպեր տերմինի ուրիշ ձևերն էլ դեռ կան, որ պահպա-  
նել են ուրիշ լեզուները, բայց այստեղ շատպում եմ պարզելու  
լիեր իոկապէս յվեր ձևի գլխաւոր գաւառական շառաւիղները,  
որովհետեւ յեսին ժամանակում յի-ի փոխ. մ-ի՝ կոշտ. Ի դառ-  
նալիս, վրացերէն հնչման համեմատ, պահանջւում է շրթնային  
վ-ն դնել բառի սկիզբը կամ երկու ձայնաւորների միջև: Նոյն  
հնչման հոմեմատ էլ, կանոնաւոր է, ինչպէս ցոյց է արուած  
լ-ի՝ զ դառնալը. այսինքն կանոնաւոր է յիեր-ի տեղ զիեր ձևը:  
Սակայն տեղական բարբառները զարգացման նոյն շրջանում  
կանգ շառան, երբ ֆողովը գի շրթունքներում յեղյեղուում էր  
զիեր-ի բարբառային լանազանութիւնը, այլ նրանց շարունակուող  
կեանքում վ-ն կամ գուրս ձգուեց (օբինակ գեր) կամ վ-ն դարձաւ  
ու (զ ուր): Թէ այս և թէ այն ձևը գտնում ենք տեղական  
աշխարհագրական անունների մէջ: Գեր արմատից կազմուած է  
այն աեղի անունը, ուր ընակում են զեր-երը, փոխ. զիեր-ները  
կամ իվեր-ները. Ե նախդիրի միջոցով՝ նգեր: Այդ անունից  
կազմուած է ուլորական մ նախդիրով, ել վերջաւորութեամբ  
և ե կիսաձայնի ողմամբ մ-եղը-էլ-մ մնդրելցի, ինչպէս նդիպա-  
մ-եգիպտ-էլ-ի=եգիպտացի: Այժմ վրացիները մի միայն Մնգը-  
լիայում քնակողներին են մնդրելցի համարում. բայց վրացա-  
կան հին յիշատակարաններից երեւում է, որ վրացիներին՝ եղեր  
տերմինի աւելի ընդարձակ նշանակութիւնն էր յայտնի: Այդ

բառից առաջ է եկել Եգրիս-ի անունը, որով հասկացում էր ամբողջ արևմտեան Վրաստանը, մէջ առնելով այժմեան Խմելքեթիան, Գուրիան, Խմեր—Խելին և այլն։ Եգեր աշխարհի անունը անիտուխ պահպանուած է Մովսէս Խորենացու աշխարհագրութեան մէջ (Հրատ Պատկանեանի, 6, 16, 17)։ Բ. — Թ. դարի այս աշխարհագիրը, ի հարկէ զործ է ածում այդ որպէս տերմին, Վիրքից տարբեր, որ իրանից շատ առաջ յատկացուած էր Վրաստանին, բայց նու այնուամենայնիւ Եգերքին աւելի ընդարձակ մեկնութիւն է տալիս, նրա կաղմի մէջ թուելով Խաղերին և Հաներին, այսինքն, այսպէս կամ այնպէս նրա սահմանը մօտեցնելով իսկական վրացիների ընտակալայրի հարաւային սահմաններին։ Երկրի այդ անունից ծոգել է Եգեր—ացիք հայերէն կոչումը այն ժողովրդի, որ զետեղուած է Հայաստանի հիւսիս արևմտեան կողմում պոնտացիների հետ (Մ. Խորենացի, պատմ. Բ. 6)։ Յաւական առաջ, Եգեր-ը յիշւում է Փաւոտոսի մէջ (դ. 7) սուանների հետ (Եգեր-սուանք)։ Մի ուրիշ ձեզ ունենք կոշտ գուղվ (գվեր-գուր) Գուրիա գաւառի կոչման մէջ։ Այդ անունի մէջ, որ զուրս է Եկել Գվերիա-ից, կայ իա վերջաւորութիւնն էլ ինչպէս Խվերիա-յի մէջ է։ Արևմտեան Ոնդրիովկասում, քաղաքական միութիւն կաղմող երբեմն շատ աւելի յայտնի վրացական այս ցեղի կամ լաւ ևս ցեղերի անուան բարբառային տեղական այլ և այլ տարբերութիւնները հենց տեղումը ճշդելու համար շատ նիւթեր կան։ Առայժմ բաւականանում եմ մերձաւոր եղբակացութեամբ։ 1. հարաւ արևմտեան կողմում ապրող վրաց ցեղակից ժողովուրդներին էլ, արևելեան քարթվէլներին էլ յոյները (Եվերիս) և նրանցից առնելով՝ հայերը «վիրք» են կոչում։ 2. Վրացական ժողովրդի անուան բեր-արմատի վերայ աւելացնելով ցեղ նշանակող տեղական գաւառական ձ-էն վերջաւուրութիւնը, վրացիներն էլ, յատկապէս արևելեան վրացիները—քարթուէլները յոյններին, այսինքն համապատասխան սահմանակից երկրի յոյններին անուանում էին (բեր-ձին-ի)։ Հետեւապէս, պարզուում է, որ իվերացիներ անուամբ պէտք է հասկանալ, այս բառի տեղական, ազգագրական նշանակութեամբ, ոչ թէ արևելեան, այլ արևմտեան վրացիներ, աւելի ճեշ՝ միջերկրեայ, այսինքն, ծովափնեայ լազերից յետոյ վրացական ցեղերի երկրորդ շարքը, ցեղերի, որոնք անմիջապէս կից են լազերին և զետեղուած են Կովկասի ներքին շերտի վերայ կոր գծով Սպերից մինչև Սուաննեթիան, հետեւաբար պարփակելով, եթէ ոչ ամբողջ այժմեան Մովսելիան, անշուշտ նրա մեծագոյն մասը։ Այս ցեղակից իվերական երկրի նշանաւոր մասը արևելեան վրացիները—քարթվէլները—լեզուով միացըել են իրանց

հետ, մասնակից անելով նրան քարթվելական քրիստոնէ-ական կուլտուրային, որ այժմ, վաղուց, շատ վաղուց դաշտել է համավացական ազգային: Ակզբում, մօտաւորապէս մինչև Զ.-Է. դարը խվերական երկերը հաւանօքէն պահպանել էր ամբողջովին իւր լեզուային առանձնութիւնը, քրիստո-նէական կուլտուրայի վերաբերութեամբ այս խվերացիք լազերի հետ միասին, արևելեան վրացիներից—քարվէլներից տարբեր-ուելու համար, (որի զանազան ապացոյցները կան), իսկզբանէ գտնուում էին յոյն եկեղեցու հետ քացառիկ և անմիջական հաղորդակցութեան մէջ: Ըստ երեսութիւն, այս խվերացիք էլ իրանց արևելեան եզրայրակիցների համար հարթեցին ճանապարհը դէպի Սուբր Երկերը: Գուցէ այս խվերներից է առաջ եկել երու-սաղէմում Ե. գարում խվերական վանք հիմնող Պետրոս Մայու-մացին, որը մինչև Ժ. գարի վերջը յայտնի չէր արևելեան վրացիներին-աննալներին. (Н. Марръ, Житие Петра Ивера. Եր. X.): Ամենայն հաւանականութեամբ այս խվերացիների վանքերն էլ Ս. Երկրում նորոգեց Յուստինիանոսը (Прокопий, De aed., V. 9) միաժամանակ լազերի վանքի հետ (նայել վերև. Ժան. Եր. 165 Ժ. 4 սոյն թարգ. Եր. 106 Ժ. 3.): Սենայում էլ նկատում ենք լազերի երեսումն խվերացիների հետ զուգընթացաբար. լազերը գաղթել են այստեղ, տեղական աւանդութեան համեմատ, վան-քին սպասաւորելու համար (А. А. Васильевъ, Поездка на Синай въ 1902 году СПБ. 1904, Եր. 47), իսկ խվերացիները գաղթել են որպէս, արևմտեան վրացիներից առանձին իմն յարգուած, Սե-բաստիայի քառասուն մանկանց վանքի կառուցանողներ (Պօր. Սուսեկսի, первое путешествие въ Синайскій монастырь, 1856, Եր. 195): Այս իսկ խվերացիք էլ լազերի հետ սկսել են, ամե-նայն հաւանականութեամբ, յետին ժամանակներում ներմու-ծել վրաց ազգային գրականութեան մէջ յունաց եկեղեցական ուղղութիւն: Նրանք էլ, բնականաբար, գարձան յունաց կայ-սերական գաւանութեան՝ քաղկեդոնականութեան—տարածող-ները ցեղակից ժողովուրդների մէջ: Այդ հեռաւոր ժամանակին, յոյն եկեղեցական ազգեցութիւնը, իհարկէ, յոյն կայսերական լեզուի հետ գըաւել էր սվաններին էլ<sup>1</sup>: Սվաններէնում պահ-

1. Կիրիլի եւ Մեֆոդի հին սլաւոններէն վարքի համեմատ արխագ-ները (աւասպները) ունէին տեղական եկեղեցական լեզու (Marquart, Ժիշ-յոդ. Եր. 190), սակայն այս վկայութիւնը վերաբերում է այն ժամանակին, երբ արխագները, որպէս կոչւում էին այդ ժամանակ արեւմտեան վրա-ցիք, յիրաւի, ունէին եկեղեցական դրչութիւն, բայց այն արդէն վրա-ցիքն էր:

պահուել են բացառապէս յունական եկեղեցական ազգեցութեան հետաքրքիր հետքեր օրինակ. Սկզնները իրանց ժողովրդական լեզուի քահանային կոչումն են քաղ (յունարէն պապան), շաբաթը՝ սափաէն (յունասարքատօն), մինչդեռ վրաց գրականութեան մէջ սեպհական բառերն են — տռաջինի համար՝ մղելի կամ խութէուի, իսկ երկրորդի համար կարողացել են պահպանել նոյն բառի արկելեան ձևը շաբաթը (հայերէն շաբաթ, ոիրիսկան և երայսական բառից), որ Հայաստանի միջնորդ մտել է Վրաստան գեռ սիրիսկան եկեղեցուց։ Հաւանականօրէն այսպիսի յունական ծաղումն ունի ժողովրդական առացուածների մէջ մտած ավանական ստաման բառը, որ սափար է նշանակում և բովանդակում է հայութեան շիշ։ Այս, անկառակած, յունարէն ստամառ բառն է որ կառէ սափար է նշանակում և յատկապէս գինու սափար, որ պահպանաւած է ոչ միայն յունական ազգեցութեան և նմանաւած վրաց Ա. Գրգում (Մարկ. Է, 4, 8) այլ և յունարէն բնագրով ուղղուած Ա. Գրըի հայօրինակում, օրինակ. Մարկ. Է. 4. ստաման ձևով։ Մինչեւ որ կը սաքրամեար ցեղակից քարթուելների ազգային կուլտուրական տիրապետութիւնը լազերի և իվերացիների մէջ, այդ տեղ յոյն եկեղեցական ազգեցութեան ոյժը շատ զօրեղ է եղել։ Այդ հին ազգեցութեամբ էլ պէտք է բացատրել յունական բառերի բաւական մէծ քանակի ներկայաւթիւնը լազերի այն մասի մայրենի եղուի մէջ, որ մասը չէ յարել ցեղակից վրացիների կուլտուրական շարժմանը, և բնականաբար, հարկադրուել է մի կայսերական քրիստոնէական դաւանութիւնը իր օտար յունական եկեղեցական լեզուի հետ միասին փոխել. մի ուրիշ կայսերական, մուսուլմանական գաւանութեան, իրանց, լազերի համար օտար, արար և թուրք լեզուներով։ Թէև արեւմտեան լազերը հաւատարիմ են մնացել քրիստոնէական հաւատին, բայց ազգայնապէս այլառեաւել են, բոլորնին յոյն դարձել։ Գործի այս իրական հանգամանքով աւելի հականալի է դառնում, որ յոյն Պօկոպիսու գրտղը սրպէն քրիստոնէաների՝ նոյնացնում է լազերին և իվերացիներին. «այս ժողովութիւրը քրիստոնէայէ», կարգում ենք Պօկոպիսու մէջ ու նա քրիստոնէական դաւանութեան կարգերը մեզ յայանե բոլոր ժողովութիւներից աւելի լաւ է պահում» (Պեր. Ե., 1. 12, եր. 57): «Լազերը», գրում է նոյն պատմիչը, «աւելի լաւ քրիստոնէաներ են», բառացի, «բոլորց աւելի քրիստոնէայ Են» (Дестуциոն, Прокоп. Кесар. Исторія воянъ և аյлъ I, եր. 140): Այս ամեն յիշածներս ի նկատի ունենալով հետաքրքիր է, որ առաջին միտրոպոլտի անունը, որին Ա. Գրիգորը ուղարկեց «Վրացիների»